Ձև N 1

Մրցույթի հայտարարություն

«Շահումյանի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի

տնօրենի պաշտոնի թափուր տեղը զբաղեցնելու մասին

Հայաստանի Հանրապետության կառավարության 2023 թվականի փետրվարի 9-ի «Պետական հանրակրթական ուսումնական հաստատության տնօրենի պաշտոնի թափուր տեղի մրցույթի հայտարարման, անցկացման, մասնագիտական հանձնաժողովի ձևավորման, գործունեության, տնօրենի նշանակման և բողոքարկման կարգը հաստատելու մասին» N 181-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 50-րդ կետով՝ հայտարարվում է մրցույթ՝

«Շահումյանի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի տնօրենի պաշտոնի թափուր տեղն զբաղեցնելու համար:

1. Հաստատության տնօրենի պաշտոնի թափուր տեղի համար անցկացվող մրցույթին մասնակցելու պարտադիր պայմաններն են՝

1) Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունը.

2) հաստատության ղեկավարման իրավունքը (հավաստագիրը).

3) «Հանրակրթության մասին» օրենքի 12-րդ հոդվածի 21-րդ և 22-րդ մասերով սահմանված հիմքերի բացակայությունը:

2. Մրցույթին մասնակցելու համար հավակնորդը ներկայացնում է՝

1) դիմում՝ լիազոր մարմնի ղեկավարի անունով (Ձև N 2).

2) անձնագրի կամ նույնականացման քարտի պատճենը.

3) հաստատության ղեկավարման իրավունքի՝ հավաստագրի պատճենը.

4) տվյալ հաստատության զարգացման ծրագիրը՝ թղթային և էլեկտրոնային տարբերակներով.

5) ինքնակենսագրություն (Ձև N 3):

Փաստաթղթերի պատճենները պետք է ներկայացնել բնօրինակների հետ, իսկ էլեկտրոնային եղանակով փաստաթղթերը ներկայացնելու դեպքում՝ բնօրինակները ներկայացնել հարցազրույցի օրը:

Փաստաթղթերն ընդունվում **Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի աշխատակազմում (հասցե՝ ք. Արմավիր, Աբովյան 71)** 2023 թվականի դեկտեմբերի 26-ից 2024 թվականի հունվարի 17-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10.00-ից մինչև ժամը 13.00-ը, բացի հանգստյան (շաբաթ, կիրակի) և օրենքով սահմանված ոչ աշխատանքային՝ տոնական և հիշատակի օրերից:

էլեկտրոնային դիմումներն ուղարկել (**armavir.kadrer@mta.gov.am**) էլեկտրոնային փոստի հասցեին:

ՁԵՎ N 2

3x4

լուսանկար

_____
_____
_____
_____
_____
լիազոր մարմնի ամբողջական անվանում,
մարմնի ղեկավարի պաշտոն

_____ -ին
_____ -ից
դիմողի անունը, հայրանունը, ազգանունը

_____
դիմողի հաշվառման վայրը

_____
դիմողի հեռ. (աշխ., բնակ., բջջ.)

_____
անձնագրի կամ նույնականացման քարտի սերիան,
համարը, երբ և ում կողմից է տրվել

ծնված _____
օրը, ամիսը, տարին, վայրը

Դ Ի Մ Ո Ւ Մ

Ծանոթացել եմ

_____
(լիազոր մարմնի անվանումը)

կողմից հանրակրթական ուսումնական հաստատության տնօրենի պաշտոնի թափուր տեղն զբաղեցնելու մասին հայտարարությանը:

Իմ մասին հայտնում եմ.

Քաղաքացիությունը

_____
_____
(Հայաստանի Հանրապետության, իսկ երկքաղաքացիության դեպքում՝ նշել կարգավիճակի ստացման ժամկետը և երկիրը)

Հայտնում եմ, որ «Հանրակրթության մասին» օրենքի 12-րդ հոդվածի 21-րդ և 22-րդ մասերով սահմանված սահմանափակումներ չունեմ:

Համակարգչային գրագիտություն

_____
_____
_____
_____
(տիրապետման մակարդակը, համակարգչային ծրագրերի իմացությունը)

Նախազգուշացված եմ կեղծ տվյալներ և փաստաթղթեր ներկայացնելու համար սահմանված կարգով պատասխանատվության ենթարկվելու մասին:

Դիմող՝ _____ ___ _____20_____ թ.
ստորագրություն

ՁԵՎ N 3

ԻՆՔՆԱԿԵՆՍԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Անունը, հայրանունը, ազգանունը	
Ծննդյան օրը, ամիսը, տարեթիվը	
Ծննդյան վայրը, երկիրը	
Հաշվառման բնակավայրը	
Մշտական բնակավայրը	
Քաղաքացիությունը	
Այլ քաղաքացիություն, եթե կա	
Ընտանեկան դրությունը (պարտադիր չէ պատասխանել)	
Օտար լեզուների իմացությունը. բանավոր (նշել լեզուն և իմացության մակարդակը՝ վատ, բավարար կամ լավ)	
Օտար լեզուների իմացությունը. գրավոր (նշել լեզուն և իմացության մակարդակը՝ վատ, բավարար կամ լավ)	
Ուսումնառությունը, կրթությունը. (թվել կրթօջախները, տարիները, մասնագիտությունը (մասնագիտությունները)	
Աշխատանքային գործունեությունը. (թվել աշխատավայրը (աշխատավայրերը), տարիները, պաշտոնը (պաշտոնները)	
Մասնագիտական ոլորտներում գործունեության փորձի նկարագիրը. (թվել հիմնարկը (հիմնարկները) կամ կազմակերպությունը (կազմակերպությունները), տարիները, մասնագիտությունը (մասնագիտությունները)	
Վերապատրաստումները. (թվել տարիները, ծրագրերը, մասնակցության կարգավիճակը)	
Այլ տեղեկություններ. (գիտական հոդվածներ, մենագրություններ, պետական, կառավարական և այլ պարգևներ: Հնարավորության դեպքում նշել համացանցային հղումները)	
Այլ տեղեկություններ, որոնք անհրաժեշտ եք համարում տրամադրել	
Հեռախոսահամար	
էլեկտրոնային հասցե	
Փոստային հասցե	
Անհատական բլոգը կամ համացանցային էջը (առկայության դեպքում)	